

**ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավար՝  
Արայիկ Հարությունյանին  
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,  
Կառավարության տուն 1**

**ՀՀ Տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարարություն  
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,  
Կառավարական տուն 3**

**«Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊ ընկերության  
տնօրեն՝ Ծուշանիկ Խաչատրյանից**

**ՀՎՀՀ՝ 00436227  
Հասցե՝ ք. Երևան, Նուբարաշեն խճ. 9/1  
Հեռախոս՝ 093939193**

### **Հարգելի՛ պարոն Հարությունյան.**

ՀՀ ՏԿԵ նախարարությունը հայտարարել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղիների համար: Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ 2021 թվականի նոյեմբերի 2, մինչև 17:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2021 թվականի նոյեմբերի 5, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2021 թվականի նոյեմբերի 9, ժամը 11:00, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք:

Վերոհիշյալ մրցույթին մասնակցել են թվով երկու ընկերություններ՝ «Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊ և «Ընկերներ» ՍՊ ընկերությունները:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության ` Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղիների համար մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և պայմաններն են.

1. Հայտ՝ N2 ձևի
2. \* Ավտոբուսների գրացման վկայագիր (ժամանակավոր կտրոն):
3. \* Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:
4. \* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:
5. Հավաքակալայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախատրեքային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրելու նպատակով վերասարքավորված ավտոբուսների համար լիազոր մարմնի կողմից տրամադրված վերասարքավորման մասին թույլտվության մասին որոշում:

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22. 1 կետի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է ստորև նշված հաշվեհամարին մինչև 2021 թվականի նոյեմբերի 8-ը ժամը 12:00 փոխանցել սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումար՝ Հ/Հ 900008000730:

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների համաձայն:

Սույն թվականի նոյեմբերի 02-ին «Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊ ընկերությունը, պահպանելով հայտարարված մրցույթի բոլոր պահանջները, փակ փաթեթը ներկայացրել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Գտնում ենք, որ վերը հիշատակված մրցույթը անցկացվում է օրենքի կոպիտ խախտումներով և առերևույթ առկա է մասնակցիններից մեկի նկատմամբ հովանավորչություն, ինչը պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Այսպես.

**Նախ**, 2021 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ կառավարության թիվ 1428-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշման մեջ, ըստ որի՝ 50-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ: Դրա համաձայն՝ Մրցույթի արդյունքներով հավասար միավորներ հավաքելու դեպքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն ըստ առաջնահերթության, ի թիվս այլ պահանջների, ներկայացրել է ավելի մեծ քանակով փաստացի ձեռք բերված ավտոբուսներ:

Այս, ՀՀ ՏԿԵ նախարարությունը վերը հիշատակված հայտարարության մեջ կատարում է փոփոխություն, որի համաձայն՝ Արմավիր-Երևան երթուղիում ավտոբուսների նստատեղերին ներկայացվող 21-ից սկսած նստատեղերի առկայության պահանջը հանվում է:

Չարմանալիորեն ՀՀ ՏԿԵ նախարարության մրցույթի վերաբերյալ հայտարարությունից և հիշատակված փոփոխություններից առաջ մրցույթի մասնակից «Ընկերներ» ՍՊ ընկերությունը արդեն իսկ Հայաստանի Հանրապետություն ներմուծել էր 16+1 նստատեղ ունեցող միկրոավտոբուսներ, ինչը ցույց է տալիս, որ ՀՀ ՏԿԵ նախարարությունից առկա է ինֆորմացիոն արտահոսք և միգրացե մրցույթի մասնակիցներից մեկի նկատմամբ հովանավորչություն:

**Հաջորդը**, «Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊ ընկերությունը ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 22.1-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունը երթուղային ցանցը կազմակերպող մարմնի տրամադրած հաշվեհամարին է փոխանցել երթուղիները սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումարը Կազմակերպության հիմնադրի միջոցով իր հաշվեհամարից՝ որպես իր կազմակերպության գործունեությանը ուղղված կապիտալ ներդրում:

Մրա հետ կապված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից բանավոր կերպով մեզ հայտնել են, որ փոխանցումը կատարվել է վերոհիշյալ իրավանորմի խախտմամբ, այն հաշվառմամբ, որ փոխանցումը կատարվել է Կազմակերպության հիմնադրի անունից իր հաշվահամարով՝ նշելով նաև, որ դրա հիման վրա մեր ներկայացրած հայտը մերժվելու է:

Մա այն դեպքում, երբ փաթեթը բացվել է նոյեմբերի 5-ին, Մրցութային հանձնաժողովի կողմից ստուգվել են հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումարը վճարելը հավաստող փաստաթուղթը, սակայն որևէ թերություն չի մատնանշվել, որի պարագայում մրցույթի հաջորդիվ փուլերում փաստաթղթերի հետ կապված թերության մատնանշումը իրավաչափ չէ, քանի որ մասնակցին

գրկում է վերը հիշատակված Կարգով նախատեսված հավելվածի 34-րդ կետով սահմանված թերությունները վերացնելու իրավունքից:

Ավելին, նույն կարգի հավելվածի 22.1 կետով չի սահմանվում պահանջ առ այն, որ երթուղային ցանցը կազմակերպող մարմնի տրամադրած հաշվեհամարին փոխանցումը պարտադիր կերպով պետք է իրականացնի Կազմակերպությունը՝ իր հաշվահամարով, որի պարագայում նման պահանջի ձևակերպումը արդեն իսկ խախտում է «Վարչարարության հիմնուքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված վարչարարության օրինականության սկզբունքը: Միաժամանակ, նշված պահանջը խախտում է «Վարչարարության հիմնուքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ձևական պահանջները չարաշահելու անթույլատրելիության սկզբունքը, քանի որ Կազմակերպությունը առնվազն բովանդակային առումով կատարել է ավտորուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումարը վճարելու պահանջը:

Ընդ որում, մեր հայտով ներկայացված փաստաթղթերում առկա «թերության» և մեր հայտը մերժելու մասին մեզ հայտնում են ՀՀ ՏԿԵ նախարարությունից, այն դեպքում, երբ դրա իրավասությունը պատկանում է բացառապես Մրցույթային հանձնաժողովին:

Վերոգրյալ փաստերը վերահաստում են, որ ՀՀ ՏԿԵ նախարարությունից մրցույթի մասնակիցներից մեկի նկատմամբ առկա է ակնհայտ հովանավորչություն:

Սա նաև այն դեպքում, երբ «Ընկերներ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած միկրավտորուսները ակնհայտորեն զիջում են «Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊ ընկերության ներկայացրած ավտորուսներին, և պարունակում են խախտումներ մրցույթին մասնակցելու պահանջների հետ, դրանք են՝

1. Փաթեթում ներկայացվել են 36 / երեսուն վեց / միավոր 16+1 տրանսպորտային միջոց, սակայն ցուցադրված տրանսպորտային միջոցները 32 / երեսուն երկու / միավորը 15+1 նստատեղով են, իսկ 4 / չորս / ը` 13+1,

2. Համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարության հայտարարության՝ մրցույթին ներկայացվող ավտորուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար, սակայն ներկայացված 4 / չորս / միավոր տրանսպորտային միջոցներում ակնհայտ բացակայում էին վերոհիշյալ պահանջները, ինչպես նաև չեն համապատասխանում ՀՀ Կառավարության թիվ 1994-Ն որոշման 4-րդ ենթակետի 14.1 կետի պահանջներին /**կազմակերպությունները պետք է ապահովեն տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) համար մատչելի կամ հարմարեցված ԳՕՍՏ 30478-96 ստանդարտի պահանջներին համապատասխանող ավտորուսներ, որոնց նվազագույն քանակը սահմանում են հանձնաժողովները**/: (Ստորև կներկայացվեն 09.11.2021թ. մրցույթի անցկացվման օրը կատարած վերոհիշյալ տրանսպորտային միջոցների լուսանկարները:

Մրցույթը հայտարարվել է որպես ավտորուսային երթուղի, Ձեր ուշադրությանն ենք հրավիրում նաև այն հանգամանքին, որ համաձայն Ավտոմոբիլային տրանսպորտի մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի հղման՝ **ավտորուս**՝ ավտոմոբիլ, որի նստատեղերի քանակը, բացառությամբ վարորդի նստատեղի, գերազանցում է ութը. 9-17 նստատեղ ունեցող ավտորուսը, առանց վարորդի նստատեղի, համարվում է միկրոավտորուս, **երթուղային ավտորուս**՝ տվյալ երթուղու սահմանված կանգառներում ուղևորների նստեցում և իջեցում կատարելով՝ կանոնավոր փոխադրում իրականացնող ավտորուս.

**երթուղային տաքսի**՝ միկրոավտորուս, որով իրականացվում է կանոնավոր փոխադրում սահմանված երթուղով՝ միայն սահմանված կանգառներում նստատեղերի թվով ուղևորների նստեցում և ուղևորների պահանջով երթուղու ցանկացած կետում իջեցում կատարելով:

Ելնելով վերոգրյալից հանգում ենք այն եզրահանգմանը որ «Ընկերներ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցները հանդիսանում են միկրոավտորուս:

Ուստի խնդրում ենք, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ վերահսկողություն իրականացնելով ՏԿԵ մարմնի կողմից անցկացվող մրցույթի օրինականության նկատմամբ, քանի որ առկա է ողջամիտ և հիմնավոր կասկած, որ մինչև մրցույթի արդյունքների հրապարակումը տեղի է ունեցել օրենքի պահանջների կոպիտ և լրջագույն իրավախախտումներ,

որով կարող է սահմանափակել ՏԿԵ մարմնի կողմից անցկացվող մրցույթի արդյունքների օբյեկտիվ հրապարակմանը, ինչպես նաև Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ համաձայն վերոհիշյալ օրենքի հոդումների «Ընկերներ» ՍՊ ընկերությունը խախտելով օրենքով սահմանված նորմերը համաձայն ՀՀ Կառավարության թիվ 1994-Ն որոշման 6-րդ ենթակետի 38 կետի պահանջների / **Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման N 2 հավելվածի տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկում նշված ակնհայտ անսարքությունների և պայմանների առկայության դեպքում ավտոբուսը ստանում է «0» գնահատական և հանվում մրցույթից/** տրանսպորտային միջոցների շահագործման պայմանների առկայության պատճառաբանությամբ իրավասու չէ շարունակելու մնալ ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղիների համար մրցույթին:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերը հիշատակված փաստերը առերևույթ պարունակում են հանցագործության հատկանիշներ պաշտոնատար անձանց կողմից, անհրաժեշտ ենք համարում խնդրի հրապարակայնացումը և քրեադատավարական ընթացակարգերի գործադրմամբ այդ փաստերի ստուգումը, որից առայժմ ձեռնպահ կմնանք՝ սպասելով Ձեր կողմից ձեռնարկված միջոցներին:

Կից ներկայացվում է.

1. «Ընկերներ» ՍՊԸ-ի կողմից 09.11.2021թ. ներկայացված «Գազել» մակնիշի տրանսպորտային միջոցի թվով 3/երեք/ լուսանկարի պատճեններ,
2. «Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ավտոբուսների տեղնիկական նկարագիրը և հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) վերաբերյալ պահանջների սերտիֆիկատի պատճենը թվով 7/յոթ/ թերթ:

**Հարգանքերով՝**

**«Գալակտիկա տրանս սերվիս» ՍՊԸ**

**տնօրեն՝ Ծուշանիկ Խաչատրյան**